

ԲՂԵՆՈ ՆՈՐԱՎԱՆՔ

(Գորիսի շրջան)



որիս շրջանի Բարձրավան՝ պատմական Երեցաթումբ՝ գյուղի մոտերքը, կուսական անտառի մեջ, գտնվում է մի ինքնատիպ և դեղեցիկ հուշարձան, որը հայտնի է «Ջհաննամ դարասու», այսինքն՝ Դժոխքաձորի վանք անունով:

Այս հուշարձանը միայն վերջերս է հայտարարվել՝ և այդ պատճառով էլ գրականության մեջ նրա մասին որևէ տեղեկություն չկա:

Այդ հուշարձանով սկսեցին հետաքրքրվել միայն 1946 թվից, սկզբում Հուշարձանների Պահպանության Կոմիտեն և ապա Պատմական թանգարանը: Երկու կազմակերպություններն էլ շափազերել են ավել հուշարձանը: Կարևոր աշխատանք է կատարվել ճարտարապետական Հուշարձանների Պահպանության Կոմիտեի գծով՝ 1950 թվին, երբ հուշարձանը մաքրվեց ծառերից, թփերից և խոտերից: Այդ մասնակի պեղումների բնույթ կրող աշխատանքների ժամանակ հողի ու փլվածքների տակից հանվեցին հուշարձանի երեսապատ քարերը, մնացած վիմագրությունները և պատկերաքանդակները, որոնց մի մասը մինչ այդ անհայտ էր:

Հիշյալ աշխատանքների ժամանակ հայտարարվեցին նաև մի քանի կարևոր մանրամասնություններ, որոնք պարզաբանում են շինվածքի կազմությանը և վերանորոգությանը վերաբերող մի քանի հարց, որոնք մինչև

այդ պարզ չէին կամ անհայտ էին: Այդ մասին կհիշենք իրենց տեղում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այդ հուշարձանը կարելի է այցելել մեքենայով Գորիսից Ղափան տանող խճուղիով, Շոնուխ գյուղից դեպի Բարձրավան տանող անտառային ճանապարհով, իսկ ձիով կամ հետիոտն՝ Հալիձոր և Շինուհայր գյուղերից, անցնելով Որոտան գետի դեղեցիկ ու խոր ձորից դեպի Բարձրավան:

Հուշարձանը շինված է Բարձրավանից հարավ-արևելք չորս կիլոմետր հեռավորությամբ, Ղափանի և Գորիսի շրջանները բաժանող անտառապատ լեռան դեպի հյուսիս ձգվող մի նեղ բազուկի վրա, որը ճանապարհի եզրից թեթևակի իջնում է դեպի Որոտան գետի ձորը և վերջանում վանքից մոտ 150 մետր հեռավորությամբ:


Որոտանի ձորի աջափնյա ժայռերի շղթան հասնելով Բաշաշուր գյուղին, թեքվում է դեպի հարավ և միանում վերոհիշյալ լեռնաշղթային, իսկ գետը շարունակում է իր ընթացքը դեպի արևելք: Այսպիսով գետի և լեռան մեջ ստացվում է մի ընդարձակ լեռնածոց, գահավեժ՝ կողերով, ամբողջովին պատած խիտ անտառով: Ահա այս լեռնածոցի մեջ է խրվում լեզվակաձև երկարող հուշարձանը կրող քնական պատվանդան-լեռնաբազուկը:

Հուշարձանը շինված է լեռնաբազկի ավելի լայն մասում, արևելահայաց եզրին: Ըստ հնարավորության, տեսադաշտն ընդարձակելու և շենքին ավելի բարձր տեսք տալու նպատակով՝ նրա արևելյան պատը հիմքված է արհեստական, կիսամշակ քարերից կրաշաղախով զոդված շարվածքի վրա: Այդ արհեստական պատվանդանի և բուն

1. Հուշարձանը հայտարարվել է 1934 թվին՝ Նույն թվին Հնությունների Պահպանման Կոմիտեի կողմից Գորիսի շրջանի ուղարկված էքսպեդիցիան առաջին անգամ թեթևակի ուսումնասիրում, լուսանկարում և հաշվի է առնում այդ հուշարձանը:

շենքի բաժանումն ընդգծված է շենքի լայնությամբ ձգվող մի նեղ աստիճանով:

Առաջին հայացքից, հուշարձանը որևէ տպավորություն չի թողնում, երբ այցելուն մոտենում է նրան ճանապարհից, այսինքն հարավից, որովհետև այդ կողմից բացվող ճակատը շենքի ամենախոցված, ավերված մասն է: Սակայն մի քանի քալ անելուց հետո, երբ այցելուն անցնում է արևմտյան կողմը, նրա առջև կանգնում է չքնաղ ու գողտրիկ կոթող, միջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ ինքնատիպ ու վեհ:



Նկ. 1.— Բղենե նորավանքի հատակագիծը

Հուշարձանը մեծ չէ, չափերը համեստ են: Արտաքուստ թե՛ երկարությունը և թե՛ լայնությունը 9,5 մետր է, իսկ բարձրությունը մոտ 6 մետր: Ընդհանուր գծերով, շենքը բաղկացած է չորս երկարավուն քառանկյունիներից, որոնցից երեքը երկարությամբ տեղավորված են իրար կողքի, դասավորությամբ հյուսիսից հարավ: Դրանցից կենտրոնականը, որն ավելի լայն է, բուն եկեղեցին է, իսկ կողքինների՝ «խորանները», ավելի ճիշտ՝ սրահները: Այդ երեք քառանկյունիների երկարությունը արևմուտքից արևելք՝ արտաքուստ 6,5 մետր է, իսկ լայնությունը՝ հարավից հյուսիս հերթականությամբ 2,6—4,65—2,25 մետր, ըստ որում, միջին մասի, այսինքն եկեղեցու լայնությունը հաշված է արտաքին պատերից, իսկ սրահներինը՝ եկեղեցու արտաքին պատերից մինչև սրահի համապատասխան արտաքին պատը:


Այդ երեք քառանկյունիների ճակատին, արևմուտքից, ընկած է չորրորդ քառանկյունին—գավիթը՝ 8,6×3 մ չափերով, երկարու-

թյամբ հարավից հյուսիս: Գավիթն էլ իր հերթին բաժանվում է երեք մասի, որոնցից կենտրոնականը եկեղեցու դիմաց, իսկ թևերի փոքր մասերը՝ սրահների: Ինչպես բերված չափերից երևում է, գավիթն իր ընդերկայնական ճակատով ամբողջովին չի ծածկում եկեղեցու և սրահների արևմտյան ճակատները, որով երկու կողքերից դուրս են մնում հարավային և հյուսիսային սրահների դուռնի անկյունները: Այդ դուրս մնացած մասերից հարավայինն ավելի լայն է, քան հյուսիսայինը: Մեր կարծիքով, այդ անհամաչափությունն առաջացել է վերջին վերանորոգություններից մեկի հետևանքով, որով հյուսիսային սրահի ընդերկայնական դուռնի պատի տեղադրությունը փոխվել է, որով և պետք է բացատրել նաև այդ սրահի նեղությունը հարավայինի համեմատությամբ:

ԳԱՎԻԹ.— Սա տաճարի շքամուտքի հետ միասին, շենքի ամենից ավելի ճոխ զարդարված մասն է: Մնացած մասերի ավելի զուսպ և ժլատ քանդակները և զարդերը կարծես նպատակ ունեն թարմ պահելու առաջին հայացքից ստացվող տպավորությունը: Գավթի արևմտյան 8,61-մետրանոց ճակատը բաժանված է երեք մասի. դրանից 2,57-ը կենտրոնում՝ մուտքի բացվածքն է կազմում, իսկ մնացած տարածությունը բաժանված է երկու մասի, յուրաքանչյուրը 3,02 մ, մուտքից աջ և ձախ ընկած թևերում: Տարրալուծելով ուղղանկյուն կտրվածքների և որմնահեց կիսասյուների բարդ կառուցվածքը, ստացվում է հետևյալ պատկերը. ֆոնը կազմում է արևմտյան պատը, որի ուղղանկյուն կտրվածքը 10 սմ-ի չափով երևում է պատի ծայրերում մուտքի բացվածքի մեջ: Այդ հարթ պատի վրա տեղավորված են 39 սմ լայնությամբ չորս տափակ կիսամուկներ, պատի ծայրերին և մուտքի երկու կողմերում: Այդ կիսամուկներն էլ իրենց կենտրոնում ունեն դուրս ընկած 19 սմ տրամագծով՝ գեղեցիկ, սլաքիկ կիսասյուներ: Երկու ավելի լայն տափակ կիսամուկների տեղավորված են մուտքի աջ և ձախ կողմերում, պատի կտրվածքի ճակատներում, մոտ 70 սմ լայնությամբ, իրենց մակերեսի վրա կրելով շրջագծի մի-երրորդով կիսամուկների կպած, կլոր, 35 սմ տրամագիծ ունեցող սյուներ: Այսպիսով, մուտքի երկու կողմում ստացվում է մեկական հաստ սյուն և բարակ որմնասյուն, իսկ դրանց արանքում՝ երեքական ուղղանկյուն կտրվածք: Սյուները, որմնասյուները և ուղղանկյուն կտրվածքները վերևից և ցածից եզերված են հորիզոնական կիսապլանով: Սյուների և որմնասյուների խարսխները բևեռներից սեղմված գունդեր

են: Նման գունդեր են ներկայացնում նաև ճակատի բարակ որմնասյուների խոյակները, որոնց վրա դրված են խորանարդ վերնախարիսխները՝ ճակատին քանդակված ոճավորված տերևներ: Գնդաձև խոյակներ չունեն մուտքի երկու կողմի սյուները: Այդ սյուների և հարակից անկյունավոր կտրվածքների վրա դրված են երեքական խորանարդ խոյակներ, խաչաձև դասավորությամբ, մեջտեղինը սյան

կազմում և ապա կորագծով իջնում ցած: Պարանների ծայրերը կիսաշերեփի ձևով կախված են մնում, իսկ երիզները շրջանց կազմելով, երկու կողմից բարձրանում են վեր: Պարանի հանգույցի երկու կողմերում տեղավորված է խաղողի մեկական ողկույզ իսկ դրանցից ցած, պարանի ծայրերի և երիզների մեջ ոճավորված են տերևներ: Թվում է, թե արվեստագետը ցանկացել է



Նկ. 2.— Տաճարի գլխավոր մուտքը

գլխին, իսկ կողքերին՝ անկյունավոր կտրվածքների վրա: Այդ խորանարդ խոյակները ձևացնում են իրար հագցված հեծանների գլուխներ: Դրանց վրայի քանդակները ներկայացնում են վերից, հորիզոնական ուղղությամբ երկու կողմից եկող պարաններ, վերից և վարից ձգված նեղ ժապավենների մեջ: Այդ պարանները և երիզները խոյակի ճակատում ուղորվում են իրար, հանգույց

արտահայտել հեծանների գլուխները խաղողի թփով պատելու և պարանով դրանց պահելու գաղափարը: Ահա թե ինչու գավթի մուտքը, շնորհիվ թեթև սյուների և այդ խոյակների, տաղավարի մուտքի տպավորություն է թողնում: Այդ գաղափարը շեշտված է նաև գավթի ճակատի մյուս կիսասյուների խոյակների տերևաձև քանդակներով: Հիշեցինք, որ մուտքի երկու կողմի սյուները գնդաձև

խոյակները շունեն. դիտողին թվում է, որ այդ խոյակները ծածկված են կախված թփի և պարանի ծալքերի տակ:

Հիշյալ խոյակներից բարձր, մոտքի վերելում բարձրանում են աստիճանաբար խորացող, իրար գրկող երեք հյուսկապ կամարներ: Դրանցից խորքինը բարձրանում է սյունների վերևից և իր երկկենտրոն աղեղով շրջանակում է գավթի ներսի կիսաստվերը: Այդ կամարից մի աստիճան դուրս և դրան ընդգրկող մի երկրորդ կամար է բարձրանում անկյունավոր կտրվածքների գագաթը ծածկող, քանդակազարդ խորանարդ խոյակի վերևից: Այդ կամարը թեթևակի պայտաձևություն ունի: Այս երկրորդ կամարից մի աստիճան դեպի դուրս բարձրանում է երրորդ, պայտաձև կամար, որը հենված է մոտակա բարակ կիսասյունների խոյակների վրա: Վերջին կամարն իր հիմքում միանում է գավթի արևմտյան պատի ճակատին տեղավորված կիսասյունները միացնող պայտաձև որմնակամարների հետ, որոնք պատի վրա կազմում են սաղր որմնախորշեր:

Գավթի արևմտյան ճակատի պատկերը լրացնելու համար մնում է ավելացնել, որ մոտքի երկու կողմում տեղավորված երկու անկյունավոր կտրվածքներն ամբողջ երկարությամբ ծածկված են իրար հյուսված ժապավենավոր քանդակներով: Քանդակազարդ են նաև սյան խարսխի մոտ, անկյունավոր կտրվածքների ցածի քարերը, 8 թվանշանի նմանությամբ իրար հագցված անվերջ ժապավենով, որի ոլորտների մեջ տեղավորված են կիսազնդած քանդակներ, մեջտեղում փոսիկներ (խնձորներ):

Գավթի կենտրոնական մասը, որն ընկած է տաճարի դիմաց, մոտ 3,5 մ երկարություն ունի, հարավից հյուսիս: Դրա աջ և ձախ թևերում, տաճարի կողքերին ընկած սրահների դիմաց, գտնվում են գավթի ավելի փոքր, 1,08 մ երկարություն ունեցող մասերը: Գավթի կենտրոնական մասը, թևերում գտնվող մասերի հետ միանում է մոտ 2 մ լայնություն ունեցող անցքերով: Այս անցքերի վրա, 2,75 մ բարձրությամբ, ձգված են մոտ կես մետր հաստությամբ քառակուսի կտրվածք ունեցող բազալտե 3-մետրանոց հեծաններ, որոնց գլուխները մի կողմից դրված են գավթի ներսից՝ արևմտյան պատին կից՝ 51 սմ լայնություն ունեցող կիսամուկների վրա, իսկ մյուս ծալքերն ամրացված են տաճարի արևմտյան պատի մեջ: Այդ քարե հեծանների վրա է նստում գավթի պայտաձև թաղը: Գավթի թևերից մեկական անցք է բացվում դեպի դուրս: Դրանցից հյուսիս-

յինը 1,22 մ, իսկ հարավայինը 1 մետրաչափ է, ծածկված միակտուր բազալտե սալերով: Գավթի հյուսիսային և հարավային պատերի երկարությունը, մինչև այդ բացվածքները, իրար հավասար չէ. հյուսիսային պատի երկարությունը մինչև բացվածքը 0,63 մ է, իսկ հարավայինը՝ 1,3 մ: Հյուսիսային պատի շարունակությունն է կազմում 0,38 մ լայնությամբ մի կտոր, կից նույն կողմի սրահի պատին (տես՝ հատակագիծը): Այսպիսով, այդ անցքերը ոչ միայն իրենց չափով հավասար չեն, այլև նույն տեղադրությունը չունեն պատերի մեջ: Գավթի թևերից մեկական անցք էլ բացվում է տաճարի հյուսիսային և հարավային կողմերում ընկած սրահների մեջ:

Գավթի նկարագրությունը վերջացնելու համար մնում է ավելացնել, որ դեպի հյուսիս և հարավ բացվող անցքերի կողքերին՝ դասից, գավթի այդ կողմերի պատերի վրա, մեկական բազալտե սալեր են տեղավորված, նույն ծառի քանդակներով, տաճարի ներսում գտնվող քանդակների նմանությամբ, բայց ոչ նույն կառարկություններ:


ՏԱՃԱՐԸ.— Արևմտյան ճակատը, որ բացվում է գավթի մեջ, ընդհանուր առմամբ պարզ է, առանց ավելորդ զարդարանքների և քանդակների խճողման: Պատի ճակատին, որի երեսպատ քարերը թափված են (վերևի մասում), եղել են շինարարական արձանագրություններ: Արձանագրություն կրող քարերի մի մասը, որ առաջ թափված էր գավթի մեջ, ըստ իրենց չափերի համապատասխանում են պատի շաղախի մեջ մնացած բներին: Այդ պատի երկու անկյունները, գավթից դեպի սրահները տանող անցքերի կողմից, զարդարված են պարզ և ճաշակով փորված, վերից վար ձգվող ակոսներով և կիսազնաներով, իսկ դրանց մեջտեղում, ճիշտ պատի անկյունում, կան երեք-քառորդով դուրս ընկած բարակ որմնասյուներ, որոնք զուտ զարդարանքի քնուկ ռնեն:

Արևմտյան պատի կենտրոնում բացվում է տաճարի գլխավոր մուտքը, միջին չափի բացվածքով ($2,05 \times 1,15$ մ): Այս դուռը (նկ. 2) հուշարձանի ամենագեղեցիկ մասերից մեկն է, թրեւս իր վանո ռճի և կառարողական արվեստի տեսակետից ամենագլխավորը և իր տեսակի մեջ հագլվագլուս հայկական ճարտարապետության կոթողների մեջ: Դռան շրջանակը բաղկացած է հինգ կտոր խոշոր քարերից, կողքերից երկուական, իսկ վերնասյամբ՝ մեկ կտորից: Վերնասյամբը և դռան կողքերի վերին քարերն իրար միացած են 45 աստիճանի տակ շեղ

կտրվածքով: Մուտքն ունի լայն քանդակազարդ շրջանակ: Քանդակները, մուտքի կողմից հաշված, դասավորված են հետևյալ կարգով. սկզբում երկու շարք խոշոր հատիկներ ունեցող ուլունքներ, իրարից բաժանված բարակ կիսագլանով, այնուհետև մի լայն շերտ, որի մեջ իրար հատող զույգ երկերից շերտերի հանգույցներն իրարից բաժանված են նույն չափի՝ իրար չնմանվող ծաղկենկար քանդակներով: Այնուհետև դալիս են երկու շարք մարգարտանման քան-

ներ երկարությամբ ձգվում է դանից, գոգավոր ակոսից և անկյունավոր կտրվածքներից բաղկացած մի բավական լայն գոտի: Այս հանգամանքը ևս մի հետաքրքիր երևույթ է հայկական ճարտարապետության մեջ:

Բուն տաճարը ներսից, առանց արտիդի, մի քառակուսի թաղապատ փոքրիկ սրահ է $3,40 \times 3,04$ մ չափերով: Արտիդի առանցքն է $1,7$ մ, որով տաճարի ամբողջ երկարությունը ներսից կազմում է $5,1$ մ: Բարձրությունը $5,5$ մետր է: Թաղը սլալտաձև է և հենվում է



Նկ. 3.— Գավրի մուտքի երկու կողմերում գտնվող սյուները խոյակը

դակների շերտեր, իսկ դրանցից հետո՝ հակադիր ծալքեր ունեցող զույգ երկերից ծապավենների մի շերտ. վերից և վարից հկող ծապավենների ծալքերը միացման տեղում իրար հատող զիգզագներ են կազմում: Մուտքի քանդակազարդ գոտին վերջանում է մի ավելի հաստ կիսագլանի շրջանակով:

1950 թվին կատարված մաքրման աշխատանքների ժամանակ, գավթի ներսում թափված շինաղբի շերտը վերացնելուց հետո, բացվեց տաճարի մուտքի շեմքը և արևմտյան պատի հիմքը, որի հետևանքով պարզվեց, որ մուտքի քանդակազարդ շրջանակը ցածրում կորնթարդ դուրս է ընկնում՝ կազմելով այդ շրջանակի ոտքը, իսկ պատի ցածրում

մոտ $3,5$ մ բարձրությամբ՝ պատերի երկայնքով ձգվող՝ լայն թաղակալ գոտու (ինպոստի), վրա: Այդ գոտին շարունակվում է նաև արտիդի մեջ, կրելով նրա գոգավոր, երկկենտրոն աղեղներ ունեցող առաստաղը: Տաճարի արևմտյան պատից $0,7$ մ հեռավորությամբ, հյուսիսային և հարավային պատերի մեջ, դեպի սրահներն են բացվում զույգ կամարակապ անցքեր (Նկ. 2-ի հետին պլանը)¹, որոնք իրարից անջատված են $0,4$ մ լայնությամբ միջնորմով: Այդ միջնորմների ձակատին, ներսից քանդակված են հատա-

1. Ներկայումս այդ անցքերը փակված են ցից դրված խոշոր սալքարերով:

կից բարձրացող, իրար ուղորված նուան երկու թփեր, իրար հաջորդող պտուղների և տերևների քանդակներով: Այդ զույգ անցքերի կամարները կիսաշրջանաձև են և ճակատներից, այսինքն թե՛ տաճարի ներսից և թե՛ սրահների կողմից՝ ծածկված են բուսական, գեղեցիկ, իրարից տարբեր քանդակներով: Միջնորմների շորս անկյուններում կան երեք-քառորդով դուրս ընկած բարակ և կարճ որմնասյուների: Աբսիդի եզրերից բարձրանում են ավելի հաստ և ավելի երկար որմնասյուներ, որոնք կրում են աբսիդի ճակատի կամարը: Աբսիդը կիսաշրջանաձև է՝ 1,25 մ շառավիղով: Այդ կիսաշրջանի ծայրերը, մոտ կես մետր տարածությամբ, երկու կողմից, իրար զուգահեռ, ձգվում են դեպի դուրս՝ խորություն տալով բեմին: Աբսիդի արևելյան ճակատին, բեմի հատակից մոտ մի մետր բարձրությամբ, կամարակապ, ներսից 0,85 մ բացվածքով և դեպի դուրս թեթևակի նեղացող, մեծ լուսամուտն է: Լուսամուտի երկու կողմից, դեպի աբսիդի եզրերը, պատի մեջ տեղավորված են երկուական գոգավոր կամարակապ խորշեր: Խորշերն իրարից և լուսամուտից բաժանվում են երեքական բարակ կիսասյուներով, որոնցից կենտրոնինը թեթևակի դեպի դուրս է դրված: Խորշերի և լուսամուտի տակից, աբսիդի պատերին, հորիզոնական գծով, ձգվում և երկու շերտից բաղկացած մի գոտի. այդ շերտերից ցածինը հաստ կիսազլան է:

Տաճարի արևմտյան պատի մեջ, գլխավոր մուտքից վերև, կա երեք մի ավելի փոքր լուսամուտ, որը բացվում է գավթի մեջ, մոտավորապես 0,40X0,80 մ բացվածքով: Այդ բացվածքը դեպի ներս կողքերից լայնանում է:

Չնայած համեստ չափերին, տաճարը ներսից ընդարձակ, լայն և բարձր շենքի տպավորություն է թողնում, որտեղ առատ օդ և լույս կա:

Տաճարի պատկերը լրացնելու համար պետք է նկարագրել նաև նրա պատերն արտաքուստ: Դրանցից արևելյան պատն ընդհանուր է թե՛ տաճարի և թե՛ սրահների համար: Այդ պատի արտաքին տեսքի մասին, ներկա դրությամբ, դժվար է ամբողջական և լրիվ պատկերացում կազմել, որովհետև դրա երկու ծայրամասերն էլ, սրահների ուղղությամբ, մեծ մասամբ քանդված են: Իրենց տեղում մնացել են միայն տաճարի ճակատի երեսպատ քարերը, այն էլ ոչ ամբողջությամբ: Ըստ երևույթին, այդ պատը, քացառությամբ երկու խոր, եռանկյուն խորշերի, որոնք տեղավորված են տաճարի ընդերկայ-

նական պատերի ուղղությամբ, այլ զարդարանք չի ունեցել:

Տաճարի հյուսիսային և հարավային պատերը բացվում են հուշարձանի այն երկու բաժանմունքների մեջ, որոնց մեջ սրահներ են անվանում. թե ինչու՞ այդ մասին կասենք քիչ հետո: Այդ պատերի արևմտյան անկյունները, ինչպես հիշեցինք, ձևավորված են բարակ կիսասյուներով. դեպի տաճարը տանող երկու զույգ անցքերի կամարների ճակատները և անցքերի միջնորմի ճակատը զարդարված են բուսական քանդակներով: Այսպիսով, տաճարի շորս ճակատներն էլ ձևավորված են և գավթի ու սրահները ներկայացնում են հուշարձանի այդ կենտրոնական մասի շրջանակը, որը հյուսիսից, արևմուտքից և հարավից օղակում է տաճարը, նմանությամբ Ուտուի, որի ոտները կցված են հուշարձանի արևելյան պատին:

Ներկայումս տաճարի թաղը վնասված է. ճեղքված է արևելյան ծայրը մեջտեղից, և թաղի հարավ-արևելյան մասը հեռացել է աբսիդի ծածկից:

ՄՐԱՆՆԵՐ.— Սրանք երկու հատ են, երկարությամբ տեղավորված տաճարի հյուսիսային և հարավային կողմերում: Դժբախտաբար դրանց կառուցման նախնական ձևը ներկա դրությամբ դժվար է ճշտել որոշել: Պատճառն այն է, որ հարավային սրահն ամբողջովին փլված է և դրանից մնացել է միայն գավթին կից պատը, իսկ հյուսիսայինը գգալի փոփոխությունների է ենթարկվել հետագա վերանորոգումների ժամանակ: Մասնավորապես ամբողջովին փոխված է այդ սրահի հյուսիսային ընդերկայնական պատը: Այդ երևում է նրա տարբեր շարվածքից, չափերից և այն հանգամանքից, որ հյուսիս-արևմտյան անկյունը դրսից ձևավորված չէ, ինչպես այդ կատարված է դրան համապատասխանող, հարավային սրահի հարավ-արևմտյան անկյան նկատմամբ, որը մնացել է անփոփոխ: Այդ պատը նույնիսկ իր տեղում չի դրված (ներկա դրությամբ), այլ ավելի ներս, որով կրճատվել է այդ սրահի լայնքը: (Շարունակելի)

1. Արևելյան ձորում թափված քարերի մեջ աչքի է ընկնում մի խոշոր քառակուսի սալ, որի մեջ փորված են զույգ, նեղ ու երկար, միջնասյունիկով իրարից բաժանված լուսամուտներ, գեղեցիկ քանդակներ: Ունեցող շրջանակի մեջ, Այդ քարի ներկա շենքին պատկանելու հարցը վիճելի է, որովհետև տաճարի այժմյան լուսամուտի կամարակապ գագաթի առկայությունը որևէ կերպ չի տրամադրում ենթադրելու, որ այդ լուսամուտը զույգ բացվածք է ունեցել դեպի դուրս: